## Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր  N 1

**ՀՀ ԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ԵՎ «ՎԱՆ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի ՄԻՋԵՎ 09.07.2026թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/37-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «     » Հուլիսի 2026թ.

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սահակ Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԱՆ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տիգրան Մկրտչյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 09.07.2026թ. կնքված N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/37-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով պայմանագրի կատարման ապահովումը Պայմանագրով նախատեսված ապրանքների վճարումը կատարվում է ապրանքների ընդունումից **հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:**

1.2. Կողմերը համաձայնեցին, որ Պայմանագրի Հավելված N 1-ով և Հավելված N 2-ով սահմանված ապրանքների մատակարարումը իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ Պատվիրատուի պահանջի հիման վրա: Առաջին մատակարարումը իրականացվում է մինչև 20 օրացույցային օրվա ընթացքում, իսկ Մատակարարի համաձայնությամբ՝ հնարավոր է նաև ավելի սեղմ ժամկետում: Հետագա յուրաքանչյուր մատակարարումը իրականացվում է Պատվիրատուի գրավոր կամ էլեկտրոնային պահանջը ստանալուց հետո՝ 3 օրացույցային օրվա ընթացքում:

1.3. Սույն համաձայնագրով ուժի մեջ են դրվում Պայմանագրով սահմանված բոլոր քանակները, որոնք ենթակա են մատակարարման սույն համաձայնագրի պայմաններին համապատասխան:

### 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/37-1» ծածկագրով Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
«Հանրապետական Շտապ Օգնության Ծառայություն» ՓԲԸ
Հասցե՝ ք.Գյումրի, Մազմանյան 3բ
ՀՎՀՀ 05500411
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1570078724667200
Տնօրեն՝ Սահակ Հակոբյան

-------------------------------------------
(ստորագրություն) Կ.Տ

Ստորագրող
ՍԱՀԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ
3711840906

2026-07-15 17:19:41 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«ՎԱՆ ՖԱՐՄ» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրան մեծ փ. 36շ
Հայէկոնոմ բանկ ԲԲԸ
ՀՀ 163288077767
ՀՎՀՀ 00466414
Տնօրեն՝ Տիգրան Մկրտչյան

-------------------------------------------
(ստորագրություն) Կ.Տ.

Ստորագրող
ՏԻԳՐԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1301840742

2026-07-14 11:28:26 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից